

ԲԱԶՄԱՎԷՊ ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳԻՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՌՅՀԱ-ՌՅՀԲ

ՀԱՏՈՐ

ՀԹ

1922

ՅՈՒԼԻՍ

ԹԻՒ 7



Ս. ՂԱԶԱՐ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԱՆԵԼԻՈՅՆ ԶԵՆՈՐԱՅ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ

Ի ՄԱՏՆՈՒԹԻՒՆՆ ՏԵԱՌՆ

«ՀԱՆՐԱՍ ԱՄՍՈՐԵԱՑ»-ի մէջ Հ. Վարդանեան¹ «Զենոր Գաղիւտցի և իր դասական մնացորդները» վերնագրով յօդուածով մը զենորեան չորս ճառեր հրատարակեց, փափաքելով միանգամայն որ Մխիթարայ ձեռակերտ ալ ծանօթացնէ իր կարգին Զեռագրատան զրչագրաց մէջ պահուած սոյն ճառերուն կարևոր տարբերակներն ու յաւելումները:

Հանդիպելով ընդունելով մեր Պատ. եղբայրակցին հրաւերը՝ կը հրատարակենք այս անգամ սոյն ճառերէն առաջինը:

Ըսենք նախ որ խորագիրը, ինչպէս կը դիտէ Հ. Վարդանեան, հետեցնելով Զարհանալեանի ըրած յիշատակութենէն, ստուգիլ կը տարբերի վեննայի Մատենադ. ին մէջ գտնուածէն, ու մինչ մեր կը կրէ «Զինորայ եպիսկոպոսի վասն մատենոսեան Տիւան», «ՀԱՆՐԱՍ» կը դնէ միևնոյն ճառին խորագիր «Երանելոյն Զինորայ սրբոյ եպիսկոպոսի ասացեալ ի մեծի խորհրդարանի»:



առտրն ընդդէմ Յուդայի մատենի անալիզն աշակերտի»:

Գրչագիրը որ մեզ կու տայ այդ ընտիր նըշխարը՝ է ճառընտիր Իթ 36 X 22 (34,2 X 17), Հ. Ներսէս Սարգսեան 1847ին Մշյ Առաքելոց վանքի երկաթագիր մեծ ճառընտրին վրայէն ընտրանօք քաղելով կազմած է զայդ. սոյն բնագիրը նախագաղափարուած է ՈԾԱ - ՈԾԻ = 1202 - 1204ին վարդան քահանայ կարնեցիէ, ինչպէս ինքն իսկ Հ. Ն. Սարգսեան կը տեղեկացնէ: Յատկապէս արժանի է յիշատակութեան սա կէտը, որ այդ «պատկառելի» ճառընտիրը գաղափարուած է ի թուին Հայոց ՃԴԶ Մաքենոցի վանքին առաջնորդ Սողոմոն Զօր յօրինած մեծ Տօնականին վրայէն, անոր համար կը կոչուի նաև «Ճառընտիր Երուսաղեմայ»:

1. 1921 թ. 11-12, էջ 550.

2. Տե՛ս էջ 30. Ժան. Սարգսեան-Մար Տուրազ Զե.

էջ 436.



Յիշեալ ձառնորդի Իթ—ի մէջ ճառս, զոր հիմ առած եղբ մեզ, խորագիր ունէր միայն «Երաւնէրոյն Չեկոքայ եպիսկոպոսի»։ ուրիշ ոչինչ։ Մեր այս հրատարակութեան հետ մանրագիրն քննութեամբ բաղդատեցինք ուրիշ երկու ձեռագիրներ՝ որոնց մէջ կը գտնուի միևնոյն ճառը, և յառաջ եկած տարբերակներն ու յաւելումները, նոյն իսկ չնչին տեսնուածները մի առ մի նշանակեցինք ստորև։ Այդ երկուքն զատ «ՀԱՆՈՒՅՍ»-ի հրատարակութիւնն ալ նոյն կերպով համամտեցինք, աւելի դիւրութիւն ընծայելու համար բանաստիճաց։

Բաղդատութեան առնուած առաջին ձեռագիրն է ձառնորդի Գ. որ գրուած ունի սկիզբը «ձառնորդ տիր գրեալ յերուսաղեմ ծախիւք Տէր Զաքարիա իրա իրովայ առագիրիցու, ի թուին հայոց ՌՁՁ»։ այդ անձին յիշատակութեան արդէն քանիցս կը հանդիպինք ձեռագրիս մեծ և փոքր զանազան Յիշատակարաններուն մէջ։ Հոս մեր ճառը խորագիր ունի «Երանելոյն Չեկոքայ եպիսկոպոսի և նոյն խորհուրդ», որ կ'ակնարկէ «պատմ մատուցեալն Տեառն», ինչ որ սոյն է։ Չերուն զլուսը շնչուած է, որովհետեւ անմիջապէս նախընթաց ճառեր՝ զանազան սուրբ Հայերէն գրուած են միևնոյն նիւթին վրայօք։ Համեմատուած կ'արդորդ գրչագիրն է Չեռազատանս ամենին հսկան և պատկառելին, որ է ձառնորդի ԺԳ. զործ ԺԳ. դարու, գրուած՝ 1268 — 1270ին ի Կիլիկիա և գաղափարուած խորնի վառքին Բարսեղ առաջնորդին հնազոյն օրինակէն, ինչպէս կը վկայեն Յիշատակագրու թիւնք ևս, թէպէտ և ցանկագրողը «ձառնորդի Սաս» կը հռչէ։ Մեր այս պատաստիկին խորագիրն է «Երանելոյն Չեկոքայ եպիսկոպոսի ասացեալ ի մատուցելուն Տեառն»։

Գոհութեամբ կը դիտենք որ յիշաւի այս երեք տարբեր ձեռագիրները ըստ բաւականի կը լուսաբանեն մուկ կէտերը, կը ճշգրեն ու կը մաքրեն խառնակ և տգոյն ձեւերը՝ «Հանդէս»ի մէջ հրատարակուած Չեկոքեան սոյն ճառին, որուն բնագիրը, ըստ կարծեաց Հ. Վարդանեանի, «հիմ եղած ըլլալ կ'երևի» Զամուռնեանց պատուելի հրատարակածին։ Նշանակելի է զխառնարկէս որ ձառնորդի ԺԳ. ընտրելագոյն օրինակը կուտայ մեզ, և բացի մէկ երկու բառերու պայծառ լուսաբանութենէն՝ ազօթքով մը կը վերջացնեն ճառը, ինչ որ չուինք միտերը։

Հ. Ղ. Տ.

«Մինչդեռ անդէն իսկ ի խորհրդին՝ էին քահանայապետն, թէ զինչ՝ պատճառս գտցեն որով սպանանի կարասցեն՝ զՅԻՍուս։ Եւ ահա Յուզար մի յերկրտառան Նիցն՝ եկն եհաս և լուրջոյց զնոսա՝ Քանգի նոցա այսպէս՝ Թուեցաւ թէ իբրեւ դէտ և լրտես ինչ եկեալ է իմանալ զխորհուրդն նենգութեան, և երթալ գուշակել։ Իսկ իբրեւ երաց գողն զբերան՝ և սկսաւ խաւսել ընդ նոսա, թէ զինչ տարց ինձ՝ և ես մատնեցից զնա ի ձեռս ձեր՝ Զարմացան և հիացան, և ոչ կարէին հաւատալ քահանայապետն թէ՛ արարեալ ստոյգ խաւսի զբանն՝ Իսկ իբրեւ հաւատարմոյց՝ Երդմամբ ևս, զի եթէ տայցեն՝ նմա երեսուն արծաթի, մատնէ նոցա զվարդապետն իւր՝ առաւել զարմացան զի ընդ խորհրդոյն՝ եկն եհաս Յուզայ՝ կատարիչ խորհրդոյն։ Համարեցան քահա-

1. Ս (= Սոսյ ձառնորդի) յռեի իսկ, — Հ. (= Հրատարակութեան Հանդէս Ամս.) իսկ ի խորհրդան, —
2. Ե (= ձառնորդի Երուսաղեմայ) եթէ գիշէ, —
3. Ե. և Հ. կարասցեն սպանանել, — Ս. կարեցին պատանել, —
4. Ե. և հաւ. մի յերկրտառանցն Յուզայ, — Ս. և Հ. կը տարերի միայն Յուզայ, —
5. Ե. լուրջոյց զամենեանս, — Ս. յուրեւ ձեռս, —
6. Հ. այսպէս նոցա, —
7. Ե. զխորհուրդ նենգութեան և երթալ գուշակել, — Ս. յուրեւ ինչ... նենգութեան, — Հ. իբրեւ զլուս լրտես եկեալ է, զի զխորհուրդն նենգութեան նոցա երթալ գուշակել, —
8. Ե. (յուրեւ իսկ), իբրեւ երաց գողն զբերան, — Ս. և Հ. զբերան, —

9. Ե. Ս. և Հ. եթէ զինչ կամիք տալ ինձ, —
10. Ս. մատնեցի զնա ձեզ, —
11. Ե. և Ս. Զարմացան, հիացան քահանայապետն՝ և ոչ կարէին հաւատալ. Թէ, — Հ. հիացան զարմացան քահանայցն... եթէ, —
12. Ե. արդարեւ ստոյգ խաւսեցի զբանն, — Ս. արդարեւ ճշմարիտ և ստոյգ խաւսիցի զբանն, — Հ. արդարեւ ճշմարիտ և ստոյգ խաւսի զբանն, —
13. Ս. յուրեւ իսկ, —
14. Ե. հաւատարմոյց զնոսա, — Ս. հաւանեցոյց, —
15. Հ. զի եթէ տայցեն, —
16. Ե. և Հ. յուրեւ իւր, — Ս. մատնեց զվարդապետն (յուրեւ իւր), —
17. Ե. ընդ խորհրդոյն, —
18. Ե. և Հ. յուրեւ Յուզայ, — Ս. Յուզայ, —

նայապետքն¹ անմիտը թէ իբր յԱստուծոյ յաջողեցան իբր վասն չհաւատալի² գաւրստեանն³ Յուդայի, թէ զիարդ յանկարծակի եկն զիպեցաւ ի խորհրդին⁴, իսկ արդ, ով Յուդաս, վասն էր արդեւ մատնեա⁵ զվարդապետն⁶ ի ձեռն թշնամեացն⁷, զի չարչարեացեն և թշնամեանեացեն և զի ի խաջ իսկ հանիցեն: Զինչ ինչ չար⁸ գիտես զվարդապետէդ⁹, զի այդչափ ճեպիս առ ի մատնել յանխնայ¹⁰, Միթէ արդեւ զարուժիւնս ինչ¹¹ ո՞չ ետ առնել քեզ որպէս և այլոց աշակերտաց¹²: Միթէ հիւանդս ո՞չ բժշկեցեր, և կամ¹³ զայսահարս ո՞չ սրբէիր¹⁴, և դու¹⁵ ինքն չար էիր քան զայսահարս: միթէ դևս¹⁶ ո՞չ հանէիր, իբր¹⁷ ի քեզ՝ լեզեղն մոտեալ բնակէր¹⁸: Միթէ հազարապետ և տնտես չարամ¹⁹ զքեզ,

իրբու հանապազ գիտէր զգողութիւն քո²⁰ միթէ զքսակն իսկ ինքնին ո՞չ ետ ի ձեռն²¹, քո, իբրու²² տեղեակ էր այցտաւ և կծծի բարոյիցդ²³ միթէ առաքեալ ո՞չ ունէիր լինել, իբրու վերահասու էր եթէ մատնելոց են²⁴ զնա: միթէ արժող դատաւորութեան դատաւորն չէր²⁵ խոստացեալ քեզ, իբրու ի դատաստան մահու²⁶ մատնելոց եւ զնա: Արդ ընդէր մատնիցես ի մահ խաչի զայն²⁷, որ այնչափ բարիս կարգեաց առաջի քո: այլ թերեւս իբրեւ²⁸ ձեռացոր ի վարդապետութեանն, զտե՞ր արատ²⁹ ինչ յուսմանն իսկ զկաշառն: զի՞ առնուիր, նոյնպէս իսկ առանց կաշառոյ մատնիցես զնա ի մահ և ահա³⁰ արհնէին զքեզ քահանայքն³¹ ըստ արինացն: Եւ դուք քահանայք անաւրէնք³² ընդէր ոչ հարցանէք զՅուդաս եթէ³³ վասն

1. Ե. քահանայքն:
2. Ե. Թէ յԱստուծոյ եղև աղուութիւն իբրաց. վասն չի հաւատալի: — Ս. եթէ յԱստուծոյ իմն եղև յաջողութիւն գործոյն, վասն չհաւատալի: — Հ. Թէ իբրև յԱստուծոյ իմն եղև յաջողութիւն իբրացն, վասն չհաւատալի:
3. Ս. գործոյն:
4. Ե. խորհրդին: — Ս. խորհրդոյն: — Հ. ի խորհրդանն:
5. Ե. իսկ Յուդա՝ վասն էր արդեւ մատնեացէ: — Ս. և Հ. իսկ դու Յուդա վասն էր մատնես:
6. Ս. և Հ. զվարդապետդ:
7. Ս. և Հ. Թշնամեաց:
8. Ե. և ի խաջ հանիցեն: Եւ զի՞նչ չար: — Ս. Թէ զի և ի խաջ հանիցեն: Եւ զի՞նչ ինչ արդեւ չար: — Հ. յուրի ինչ:
9. Ս. զիտիցես ըզվարդապետէն: — Հ. զիտես ըզվարդապետից:
10. Ե. ճեպեալ ես՝ ի մատնել յանխնայ: — Ս. ճեպեալ ես անխնայ մատնել: — Հ. շնչեալ ես յանիւրնայ ի մահ մատնել:
11. Ե. զարուժիւնս ինչ: Ս. զարուժիւնս: — Հ. ինչ զարուժիւնս:
12. Ե. և Ս. որպէս և այլոց աշակերտացն: — Հ. որպէս այլոց աշակերտացն:
13. Ե. և Հ. զհիւանդս ոչ բժշկէիր, կամ:
14. Ս. յուրի և կամ զայսահարս ոչ սրբէիր: — Հ. ո՞չ առողջացուցանէիր:
15. Ե. նաև դու: — Ս. զի և դու: — Հ. զի քու:
16. Հ. զդևս:
17. Ս. և Հ. իբրև:
18. Ե. լեզեղն մոտեալ բնակէր: — Ս. Կը տարբերի լեզեղնն: — Հ. լեզեղն մոտեալ բնակեալ կայր:

19. Ս. ոչ արար: — Հ. ո՞չ արար:
20. Ե. իբրև գիտէր հանապազ զգողութիւնն: — Ս. իբրև գիտէր զհանապազոր զգողութիւնն քո: — Հ. իբրև գիտէր հանապազ զգողութիւնդ քո:
21. Ե. զքսակն ինքն ո՞չ ետ ի ձեռն: — Հ. յուրի իսկ:
22. Ե. Ս. և Հ. իբրև:
23. Հ. բարոյիցդ քոց:
24. Ե. միթէ ընդ այլ առաքեալն ո՞չ ունէր զքեզ, իբրև ի վերայ հասեալ եթէ մատնելոց են: — Ս. միթէ առ առաքեալն ո՞չ ունէր, իբրու ի վերայ հասեալ էր, եթէ մատնելոց ես: — Հ. միթէ ընդ առաքեալն ո՞չ ունէր զքեզ, իբրև հասեալ էր ի վերայ թէ մատնելոց ես:
25. Ե. աթոռ դատաւորին, դատաւորութեանն ո՞չ էր: — Ս. աթոռ դատաւորութեանն ո՞չ էր: — Հ. զաթոռ դատաւորութեանն ո՞չ էր:
26. Ե. իբրև գիտէր եթէ ի դատաստան մահու: — Ս. իբրև գիտէր թէ ի դատաստան մահու: — Հ. Կը տարբերի Ս. եւ՝ իբրև. յուրի մահու:
27. Ե. մատնես զնա ի խաջ հանել, զայն: — Ս. մատնես զնա ի մահ, զայն: — Հ. մատնեցեր զնա ի խաջ զայն:
28. Ե. զարգեաց եղ առաջի քոյ, այլ իբրև: — Ս. կարգեաց եղ առաջի, Այլ թերևս իբրև:
29. Ե. Ս. զտե՞ր արատ: — Հ. զիտէր արատ:
30. Ե. զկաշառն զի առնուիր. նոյնպէս իսկ զի առանց կաշառոյ մատնելոց էիր զնա ի մահ, (յուրի և ահա), — Ս. ընդէր առնուիր. նոյն ինքն առանց կաշառոյ մատնելոց զնա, և ահա: — Հ. կաշառոյ ընդէ՞ր տար. նոյնպէս առանց կաշառոյ մատնես զնա ի մահ և ահա:
31. Ս. քահանայապետքն: — Հ. յուրի քահանայքն:
32. Հ. յուրի անաւրէնք:
33. Ե. զՅուդա եթէ: — Ս. և Հ. զՅուդա թէ:

էր կաշառուէր¹ մատնեա զվարդապետն. եթէ² արէնսպէտը և ուսուցիչը արինացն էր³, արէնքն կաշառուէր զոր⁴ ոչ հրաւ մայրն⁵ սպանանել. իսկ եթէ⁶ կաշառուէր սպանանէր⁷, արհամարհոտը⁸ արինացն լինիր⁹. և զիարդ քահանայը կատարիչը արինացն անուանիր¹⁰. Եթէ¹¹ Յուդայի զողոյ հարկ ինչ¹² ի վերայ կայր¹³ վասն արծաթոյ¹⁴ մատնել, ձեզ ևս զինչ աւգուտ էր, եթէ¹⁵ երեսուն արծաթովն մեզս և անհնարին կործանուեալ շահեցայր անձանց¹⁶. զի եթէ¹⁷ մուրեքցուցիչ ժողովրդը ղեանդ է¹⁸, որպէս Յուդայն¹⁹ ասաց, արա թէպէտ և նա ոչ կամի մատնել, արէնքն իսկ ինքնին և մատնեն²⁰ ի մահ, եթէ²¹ չէ մուրեքցուցիչ ժողովրդեանն²², Յուդայի վասն էր մղէք և տայք զկաշառ. եթէ²³.

իրեկ զարէնսպէտ և իրրեկ զարինապահս²⁴ կամիր սպանանել, արծաթոյդ ևս²⁵ ծախք վասն էր լինիր ձեզ²⁶, ընդ այնր որ զցայցն և զառաւաւուն առ ձեզ առնէ²⁷. կամ զՅուդայ²⁸ բնաւ իսկ²⁹ զի աղաչէք զի մատնեսցէ նա ձեզ. ոչ անա առ ձեզ իսկ նստէր հանապազ ի տաճարին և ուսուցանէր. Այլ քահանայապետքն և զպիրքն ոչ խնդային ընդ Յուդայի, ոչ եթէ³⁰ ոչ կայէին³¹ ունել զայն որ ի գանձանակն անգամ ի տաճարին մտանէր³² և խաւսէր ընդ նոսա, այլ վասն այնր խնդային ընդ զան Յուդայի³³, զի գտցեն նովաւ տալ պատասխանի³⁴ ժողովրդեանն. Գանդի մինչ և նորա երթեալ էր³⁵, կասկածէին ի ժողովրդենէն, թէ³⁶ զուցէ ասիցեն թէ առ նախանձու սպանին³⁷, իսկ իրրեկ եկն Յու-

1. Ս. կաշառու.
2. Ե. և Ս. Թէ.
3. Ե. եթէ արէնսպէտը էք և ուսուցիչը արինացն —
4. Թէ արինսպէտը էք և արինաց վարդապետը.
5. Ս. յոսիս զոր.
6. Զ. ոչ հրամայէ.
7. Ե. և Ս. եթէ կաշառուէր սպանանէք. — Զ. (յոսիս իսկ) Թէ կաշառուց սպանանէք զոր.
8. արհամարհոտը. — Ս. արհամարհող. — Զ. արհամարհուց.
9. Ե. Ս. և Զ. գտանիր.
10. Ս. և Զ. յոսիս. սկսեալ զիարդան.
11. Ե. և եթէ. — Ս. Թէ.
12. Ս. յոսիս ինչ.
13. Ս. կայ.
14. Ե. կաշառոյ, Ս. կաշառոց. — Զ. կաշառաց.
15. Ե. էր զի. — Ս. է զի. — Զ. էր, եթէ.
16. Ե. մեզս ևս անհնարինս շահեցայր անձանց. — Ս. մեզս անհնարինս անձանց շահեցայր. — Զ. մեզս անհնարինս շահեցայր անձանց ձեռոց.
17. Ե. և Զ. Թէ.
18. Ե. և Ս. ժողովրդեանն.
19. Ե. որպէս և Յուդայն. — Ս. որպէս Յուդայն.
20. Ե. իսկ ինքնին մատնեն. — Ս. իսկ ունին և մատնեն զայս մատնեն. — Զ. իսկ ունին և մատնեն զայս.
21. Ե. իսկ եթէ չէր մուրեքցուցիչ ժողովրդեանդ. — Ս. և եթէ չէ. — Զ. Թէ մուրեքցուցիչ ժողովրդեանդ է.
22. Ե. Յուդայի զկաշառն վասն էր մղէք և տայք, և եթէ. — Ս. Յուդայի կաշառաւ վասն էր մղէք տայք, և եթէ. — Զ. Յուդայի զկաշառաւ զի մղէք տայք, վասն էր.
23. Ե. զարէնսպէտը և իրրեկ զարինապահս. — Ս.

24. և ոչ իրրեկ արինապահք.
25. Ս. յոսիս ևս. — Զ. արծաթոյ ծախք.
26. Ե. վասն էր լինիր ձեզ. — Ս. ընդէր լինին ձեզ ընդ վայր. — Զ. իր տարրերի Ե. և Զ. լինին.
27. Ե. ընդ այնր որ զպահէն զայցն և զառաւաւուն առ ձեզ առնէր. — Ս. զանի. — Զ. ընդ այնր, որ զայցն...
28. Ե. Ս. և Զ. կամ զՅուդայ.
29. Ս. յոսիս իսկ. — Զ. յոսիս բնաւ.
30. Ե. մատնեսցէ զնա. ոչ առ ձեզ նստէր և խաւսէր ի տաճարին. Այլ քահանայապետքը և զպիրքը. որ խնդային ընդ Յուդայն, ոչ եթէ վասն զի կայէին. — Ս. մատնեսցէ նա ձեզ, ոչ առ ձեզ իսկ նստէր հանապազ ի տաճարին և ուսուցանէր և ընդէր ոչ կալարուց զնա. Այլ քահանայապետքն և զպիրք, որք խնդային ընդ Յուդայն, ոչ եթէ զի ոչ կայէին. — Զ. մատնեսցէ զնա ձեզ. ոչ անա առ ձեզ նստէր հանապազ և ուսուցանէր ի տաճարին. Այլ քահանայապետքն, որք խնդային ընդ զալուստն Յուդայի...
31. Ե. ի գանձանակն անգամ տաճարին մտանէր. — Զ. ի գանձանակն բազում անգամ մտանէր ի տաճարն.
32. Ե. եղեն ուրախ ընդ զան Յուդայի. — Ս. ուրախ եղեն...
33. Ե. ուրախ եղեն ընդ զնալն.
34. Ե. գտցեն նովաւ տալ պատասխանի. — Զ. գտցեն նովաւ քարոզու, տալ պատասխանի.
35. Ս. և նորա եկեալ էր. — Զ. չէ էր նորա երթեալ.
36. Ե. եթէ.
37. Ե. եթէ առ նախանձու ինչ սպանին. — Զ. Թէ զուցէ առ նախանձու զնա սպանանիցեն.

դայ¹ առ նոսա, քաւեցանք ի վերին երեսս ի նախանձուէն զոր ունէին ի սիրտս² իւրեանց, քանզի պատրէին զսիրտս³ ժողովորդեանն ի ժամու դատաստանին⁴ Յիսուսի և ասէին թէ ո՛վ քաջ զիտէ զնա քան զՅուդայ զխորհրդակից⁵ իւր, զոր վասն ճշմարտութեանն հազարապետ ևս⁶ արարեալ էր: Այս Յուդայ որ վասն հաւատարմութեանն⁷ իւրոյ⁸ քսակակալ էր նորայ, սա եկն և մատնեաց զնա ի մահ⁹:

Ով Յուդայ¹⁰ որ ճեպեալդ¹¹ ես առնուլ զերեսուն արծաթին, և ի քահանայիցդ ո՛չ պատկառիս վաճառել ի տաւելիդ¹² զան մեղ անձն ի սպանութիւն: Եւ արդ¹³ երեսուն արծաթիդ լաւ իցէ¹⁴ քեզ քան զամենայն¹⁵ զոր ունէիրդ¹⁶: Կորսացոյց ուրեմն արծաթդ զմիտադ: Եւ¹⁷ ի պատճառս ագաս, հուժեան և զագահութիւնն¹⁸ իսկ կորուս-

տանն և ոչ իմանաս: Հազարապետ էիր և առարեալ և մեծ քան զՅովհաննէս որ մեծն է¹⁹ քան զամենայն ծնունդս²¹ կուսանց, և կամեցար զնովք զտէր քո վաճառել յորմէ զմեծութիւնդ ունէիր, զի՛նչ²¹ չար արար քեզ, կամ զո՞ր բարի ոչ արար քեզ. ո՛չ ահա պարգևեաց քեզ աթոռ²², և արար զքեզ²³ դատաւոր ի ժամանակին յորում դատելոց իցէ²⁴ զամենայն ազգս²⁵, ի՞նչ ահա խոստացաւ քեզ զարքայութիւնն²⁶ և ուտել և ըմպել ի սեղան արքայութեանն²⁷: Ո՛չ ահա ետ քեզ իշխանութիւն հալածել զդևս և բժշկել զհիւանդս²⁸. արդ ընդէ՛ր մորոսանաս և կորուսանես ընդ²⁹ երեսուն արծաթոյ որ ընդ իւր արծաթոյ ոչ կարես գտանել³⁰, Ահա եթէ³¹ լեալ էր քեզ³² կարասի ժողովել ի ժամանակին իբրև առաքեաց զքեզ բժշկել, թէ պիտոյ էր առաւել³³ քան զամենայն զանձ տա-

1. Ե. Յուդայ. — Ս. և Հ. Յուդաս:

2. Ս. ի ներքոյ ի սիրտս. — Հ. ի ներքս ի սիրտս:

3. Ե. և Ս. զմիտս:

4. Հ. ի դատաստանին:

5. Ե. Եթէ ժ՛վ որ քաջ զիտէ զնա քան զՅուդայ զխորհրդակիցն. — Ս. Եթէ ժ՛ ի մէջ քաջ... զՅուդայ զխորհրդակիցն. — Հ. Թէ քաջ զիտէ նա[ի քան] զՅուդայ զխորհրդակիցն:

6. Հ. հազարապետ արարեալ:

7. Ե. Յուդայ որ վասն հաւատարմութեան, — (Ս. որմեակն մեզ իջ պակսի մեր հրատարակած քննարկն հետեւեալը. «Ճշմարտութիւնն հազարապետ ևս արարեալ էր: Այս Յուդայ որ վասն»): — Հ. Այս Յուդաս...:

8. Ս. յուճի իւրոյ:

9. Ե. և Հ. զնա մեղ ի մահ: — Ս. հրադիւծ. քննարկն վրայ կ'առնեցնե եւ զայս. զի թէ ոչ զիտէ զնա փրատապետ, ոչ մատնէր. և եթէ ոչ զիտէր աւրինազանց զնա, ոչ տայր ի մեռս մեր:

10. Ե. և Հ. Ով Յուդայ: — Ս. Եւ արդ ով Յուդաս:

11. Ս. և Հ. ճեպեալ:

12. Ե. արծաթին. և ի քահանայիցդ ո՛չ պատկառել ի վաճառել ի տաւելիդ: — Ս. արծաթին, էր ի քահանայիցդ ոչ պատկառես վաճառել...: — Հ. յուճի ի տաւելիդ:

13. Ե. Ս. անձն...: — Հ. անձն ի սպանումն... և այլ:

14. Ս. արծաթդ լաւ է: — Հ. արծաթդ լաւ էր:

15. Ե. և Ս. զայն ամենայն: — Հ. զայն զոր:

16. Ե. ունէիրն. — Ս. և Հ. ունէիր:

17. Ս. և Հ. յուճի՛ն և:

18. Հ. զարծաթդ:

19. Ե. Ս. և Հ. էր:

20. Ե. և Հ. ի ծնունդս:

21. Ե. զնովք զտէրն քո վաճառել այլոց, զմեծութիւնն՝ զոր ունէիր. զի՛նչ. — Ս. զնիւք զտէր քո վաճառել և տալ այլոց զմեծութիւնն զո զոր ունէիր, ժո՛ր: — Հ. զտէրն քո զնոց վաճառել. այլոց ետ զմեծութիւնդ քո, զոր ունէիր. զի՛նչ:

22. Ս. և կամ զոր բարի ոչ ընդունաց քեզ. ահա պարգևեաց քեզ աթոռ: — Հ. ոչ ահա պարգևեաց քեզ աթոռ. կամ զի՛նչ բարի ոչ արար:

23. Ե. և Ս. յուճի՛ն զքեզ: — Հ. յուճի և:

24. Ե. ի ժամանակին յորում դատելոց է: — Ս. դատելոց եւ: — Հ. իր տարրերին Ե. և Դ. ի ժամանակին է նա:

25. Ս. աղքց մարդկան:

26. Ե. արքայութիւն և: — Հ. յուճի:

27. Ե. առ սեղան արքայութեանն: — Ս. յիւր սեղանն յարքայութեանն: — Հ. արքայութեան:

28. Ե. Ս. հանել...: — Հ. հանելոյ զդևս և բժշկելոյ զհիւանդս:

29. Ս. կորուսանես զայդ ամենայն ընդ: — Հ. կորուսանես զմեծութիւնդ ընդ:

30. Ե. արծաթոյ. ինչ՝ որ բեր արծաթոյ ոչ կարես գտանել: — Ս. արծաթոյ, ինչ որ ընդ իւր ոսկւոյ ոչ կարես ստանալ: — Հ. արծաթոյ և ոչ կարես գտանել:

31. Հ. Թէ:

32. Ե. կամեալ էր քո: — Ս. կամեցաւ էր քո:

33. Ե. ժողովել ի ժամանակին իբրև առաքեաց զքեզ բժշկել, առաւել: — Ս. յուճի այս մասը: — Հ. իր տարրերին Ե. և Դ. յորում փխկի. իբրև-ի:

հարին¹ ժողովէր զանձա, և եթէ² յայն-
ժամ ոչ կարէիր³ առնուլ յերկուզէ միւ-
սոյ առաքելոյ⁴, որ լինէր քեզ ուղեկից,
իսկ այժմիկ թէ խնդրել էր քեզ ժամա-
նակ, և երթեալ էիր ի քաղաքս⁵ հրէից
կամ հեթանոսաց բռնկութեամբն⁶ զոր

առնէիր անդ, որչափ և կամէիր, այնչափ
ժողովէր ոսկի և արծաթ⁷, Չոգաւ Յու-
ղայ⁸ առ քահանայապետսն զի վասն ե-
րեսուն արծաթոյ մերկասցի⁹ յամենայն
մեծութենէ¹⁰:

ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿ

ՐԷՍԵՆԻ ԲԺՅԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ

(Շար. անս Բզմ. 1922 էջ 167)

Րէստէն ժողովէր զարու վերջերն և յիշատակէր
սկիզբները ծաղկած համալսարանական հին
հայ բժիշկներու երևելիներէն էր, անունը
Միքայէլ Խնած էր Կ. Պոլիս 1774-1776
թուականներուն, և զաւակն էր (Ղալա-
թիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին աւագե-
րէցներէն¹ Դաւիթ-Դանիէլեան կաթողի-
կոսական վեհապետ միջոցին հաշտարարի
մեծ դեր կատարող) նշանաւոր Տէր Պետրոս
Քահանային, որուն անունով մեր բժիշկն
ալ կը կոչուէր Տէր Պետրոսեան:

Տէր Պետրոս, որուն համար կ'աւան-

դուի¹ թէ կը մականուանէր Միհասիպ օղոս
կամ Միհասիպեան, կ'ունենայ շատ զա-
ւակներ. ասոնց երեքը մանչ էին. կրտսերը
Միքայէլ Բժիշկն էր, իսկ երէցները՝ Սե-
րոբէ, Քերորէ, որոնք յետոյ բախտին
բերումով կը ստիպուին զաղթել Կովկաս.
հոն մականունին կը փոխեն «ՊԱՏԿԱ-
ՆԵԱՆ»-ի, և հետզհետէ կ'ըլլան հայր այն
նշանաւոր տաղանդներուն և վիպագիր-
բանաստեղծներուն, որոնք Ռուսահայերուն
ու ամբողջ Հայութեան մէջ «Պատկանեան»
անունը սիրելի բնած են և պաշտելի:

1. Ս. զանձա սահարիդ:

2. Ե. ժողովէր զանձ և եթէ. — Ս. կը տարբերի
Ե. և արծաթ. — Հ. ժողովեալ էր քեզ զանձ, և թէ:

3. Ե. ոչ կամիր:

4. Ս. և Հ. առաքելոյն:

5. Ե. ուղեկից. այժմու թէ խնդրեալ էր քեզ ժա-
մանակ և երթեալ էիր ի քաղաքս: — Ս. ուղեկից.
այժմու եթէ խնդրեալ էր ժամանակ ի պատճառս ինչ,
երթալ ի քաղաքս: — Հ. ուղեկից, այժմ թէ խնդրեալ
էիր քեզ ժամանակ...:

6. Հ. և հեթանոսաց, և բռնկութեամբ:

7. Ե. ժողովէր արծաթ և ոսկի. — Ս. ժողովեալ
էր քեզ արծաթ և ոսկի:

8. Ե. Յուդաս. — Ս. և Հ. Յուդա:

9. Ե. (չուի զի) վասն երեսուն արծաթոյն. մեր,
կասցի: — Ս. և վասն երեսուն արծաթոյ մերկացաւ: —
Հ. կը տարբերի Ս. և քի ի ինչ և — Ի.

10. Ե. մեծութենէն (եւ դեռ յառաջ կը վարե առաքելս)
զոր ունեցին զպէրքն և փարիսեցիք. քանզի ճեպէին
զգործն կատարել ետուն վաղվազակի զարծաթն զոր
խնդրեաց, զի մասնեացէ նոցա՝ զոր խնդրէին: — Ս. մե-
ծութենէն զոր ունէր. իսկ զպէրքն և փարիսեցիք քան-
զի ճեպեալ էին զգործն կատարել, ետուն վաղվազակի
զարծաթն զոր խնդրեաց, զի մասնեացէ զայն զոր խն-
դրէին: Ար զամենայն վասն մերոյ փրկութեան ի քեզ
կրիցեր Միտին որդի Աստուծոյ, տարեալ ամենայնի
հեղուկութեամբ և կամատրարար, պարզեալ հաւատացելոցս
ի քեզ զթողութիւն միաց. և քեզ և Հար թում և սուրբ
Հոգւոյ զփառ յաւիտեանս: — Հ. մեծութենէն, զի կա-
ցին զպէրքն և փարիսեցիք. քանզի ճեպեալ էին զգործն
կատարել, ետուն վաղվազակի զարծաթն, զոր խնդրեացն,
զի մասնեացէ նոցա զայն, զոր նոցա խնդրէին լորում
ի խնամութիւն և փառք, յաւիտեանս ժամանակաց աւրհեսալ
ամէն: